Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

12572
hmy.

172

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ասխաբադի Հայ-Լուսաւորչական Կանանց Բարեգործական Ընկերութեան.

Ասխաբադում

19 1/III 01

1720

АСХАБАДЪ.
Паровая типографія газеты «Асхабадъ».
1901.

12572

I Ընկերութեան Նպատակը.

§ 1.

Ասխաբադի հայ կանանց բարեգործական ընկերութեան նպատակն է իւր միջոցներով նպաստել քաղաքի հայ-լուսաւորչական բնակիչների բարոյական և նիւթական դրութեան բարուոքմանը:

Այս նպատակի համեմատ ընկերութեան զբաղմունքները կլինին

§ 2.

ա) Օգնել գործ կամ ծառայութիւն գտնելու, ձեռք բերել նիւթեր աշխատանքի համար և օգնել շահաւէտ կերպով վաճառելու եղած ձեռագործները:

բ) Նպաստել ձեռք բերելու առաջին անհրաժեշտութեան առարկաներ կերակուր, հանդերձ և աշխատելու գործիքներ, ըստ կարելոյն էժան գներով:

գ) Ձրի մատակարարել հանդերձ, կերակուր և բնակարան այն չքաւորներին, որոնք անկարողեն իրանց սեպհական միջոցներով ձեռք բերել:

դ) Նպաստել և միջոց տալ չքաւոր ծնողներին խնամելու և դաստիարակելու իրանց զաւակներին:

ե) Բժշկական օգնութիւն հասցնել աղքատներին:

զ) Միջոց տալ չքաւոր աշակերտներին վերջացնելու իրանց կրթութիւնը:

է) Կառավարութեան թոյլտուութեամբ բանալ մանկական պարտէզներ հայ մանուկների համար, ռուսաց լեզուի հետաւելի մօտ ծանօթացնելու նպատակով։

ը) Բանալ ընդհանուր հիմունքներով արհեստաւորաց դպրոցներ և ապաստանարաններ։

թ) Միջոցներ ձեռք առնել չքաւորութիւնը իսպառ վերացնելու։

ժ) Միջոց տալ չքաւորներին վերադառնալ հայրենիք։

ի) Հոգ տանել չքաւոր ննջեցեալներին վայելուչ կերպով թաղելու։

II Ընկերութեան կազմակերպութիւնը.

§ 3.

Ընկերութիւնը կազմվում է իգականսեռին պատկանող ամեն դիրքի և կոչման տէր անձնաւորութիւններից, որոնց թիւը չէ սահմանափակվում. ընկերութեան անդամներ չեն կարող լինել.

ա) Անչափահասները և ուսանողները և

բ) այն անձինք, որոնց իրաւունքները դատարանով սահմանափակուած են։

§ 4.

Ընկերութիւնը բաժանվում է

ա) իսկական անդամների, տարեկան 5 ր. անդամավճարով,

բ) պատուաւոր անդամների, որոնց ընտրում է ընդհանուր ժողովը ընկերու-

թեան մատուցած ծառայութիւնների համար և

գ) Գործակից կամ աշխատակից անդամների, որոնք տալիս եւ 5 ռուբլուց պակաս անդամավճար, կամ որ և է այլ պատճառով չեն կարող իսկական անդամ լինել։

Ծանօթութիւն. Աշխատակից անդամները ժողովի ծամանակ չունին ընտրողական ձայնի իրաւունք և չեն կարող ընտրուիլ որ և է պաշտօնի համար, բայց նրանց կարելի է յանձնարարել այնպիսի պարտականութիւններ, որպիսիք են չքաւորների դրութիւնը քննել և այլն։

§ 5.

Պնատուաւոր անդամներին ընտրում է ընկերութեան նդհանուր ժողովի գաղտնի քուէարկութեամբ, իսկ իսկական և աշխատակից անդամները ընդունվում են ընկերութեան մէջ առանց քուէարկութեան, սակայն կատարելով § 4-ի մէջ լիշուած պայմանները։

§ 6.

Այն իսկական անդամը, որը մինչև առաջիկայ ընդ. ժողովը չի վճարիլ իրանից պահանջելի գումարը, կամ առանց յարգելի պարճառների մի տարուայ ընթացքում չիկատարիլ իւր վրայ ընկերութեան

դրած պարտականութիւնները, արձակվումէ
անդամութիւնից և կրկին ընդունվում ընկերութեան մէջ միմիայն քուէարկութեամբ։

§ 7.

Ընկերութեան այն անդամը, որ իւր գործունեութեամբ հակառակէ ընթանում նրա շահերին, ընդհանուր ժողովի վճռով հանվում է ընկերութեան անդամակցութիւնից։

III Ընկերութեան միջոցները։

§ 8.

Ընկերութեան միջոցները բաղկանում են ա) տարեկան անդամավճարներից,
բ) միանուագ նուիրատուութիւններից, ինչպէս անտամների, նոյնպէս և կողմնակի անձանց կողմից դրամով, իրերով և այլ գոյքով,
գ) թատրոնական ներկայացումներից, համերգներից և նուագահանդէսներից, գրականական ընթերցումներից, ժողովրդական դասախօսութիւններից և այլն, իւրաքանչիւր անգամ իշխանութեան պատշաճաւոր թոյլտուութիւնն ստանալով և դորա համար սահմանած կանոնները կատարելով։

§ 9.

Ընկերութեան բոլոր միջոցները բաժան-

§ 10.

վում են ծախսելու և պահեստի գումարների։

Ծախսելու դրամագլուխ են հաշվում այն բոլոր գումարները, որոնք մտնում են ընկերութեան մէջ, առանց կանխօրէն որոշուած լինելու որ և է նպատակի համար։

Զանազան տեսակ բարեգործութիւնների համար ընկերութեան Վարչութիւնը կարողէ ծախսել այս կանոնագրութեան և ընկերութեան ընդհանուր ժողովով կայանալիք որոշումների, միմիայն ծախսելու դրամագլուխը։

§ 11.

Պահեստի դրամագլուխը կազմվում է իւրաքանչիւր տարի ընկերութեան մէջ մտած բոլոր գումարներից հանելով ոչ պակաս, քան 10%։

§ 12.

Պահեստի դրամագլուխը, ընկերութեան ընդհանուր ժողովի վճռով, ծախսվումէ միմիայն բարեգործական հիմնարկութիւններ կառուցանելու համար, կամ արդէն գոյութիւն ունեցող հիմնարկութիւնները պահպանելու, եթէ նախահաշուով որոշած գումարը բաւականութիւն չէ տալիս։

§ 13.

Ընկերութեան գումարները ծախսվում են միմիայն կամ ընթացիկ տարուայ համար ընդհանուր ժողովում հաստատուած նախահաշուի համեմատ, կամ նախահաշուից անկախ ընդհանուր ժողովի առանձին վճիռներով. Բայց անյետաձգելի կարիք ներկայացած դէպքում, վարչութեան նախագահը, իւր անձնական պատասխանատուութեամբ կարող է նպաստներ տալ ընդհանուր ժողովով որոշած չափով, այդ մասին անպատճառ յայտնելով իգիտութիւն վարչութեան նրա առաջին նիստում:

IV Ընկ. գործերի վարումը.

§ 14.

Ընկերութեան գործերը վարում են վարչութիւնը և անդամների ընդհանուր ժողովը:

§ 15.

Ընկերութեան վարչութիւնը բաղկանում է ընդհանուր ժողովում որոշած թուով անձինքներից (թուով 6—10), որոնց ընտրում է ժողովը երեք տարի ժամանակով ընկերութեան, այն անդամներից, որոնք ձայնի իրաւունք ունին:

§ 16.

Որպէսզի վարչութեան անդամները միաժամանակ չթողնեն իրանց պաշտօնը,

առաջին տարուայ վերջում հեռանում են նրանց մի 1/3ը վիճակով, իսկ այնուհետև ըստ ընտրողական աւագութեան: Պաշտօնավարութեան ժամանակը լրացրած անդամները կարող են նորից ընտրուել, եթէ ցանկանան:

§ 17.

Հիւանդութեան կամ այլ պատճառներով բացակայող կամ դուրս գնացած անդամների տեղը բռնումեն նրանց անձնափոխանորդները թուով 2—4, որոնց ընտրում է ընդհանուր ժողովը:

Ծանօթութիւն. վարչութեան այն անդամը, որ վեց ամսուայ ընթացքում ներկայ չի գտնուում նրա նիստերին, զրկվումէ վարչութեան անդամի կոչումից:

§ 18.

Վարչութեան անդամները իւրաքանչիւր տարի ընտրում են իրանց մեջից մի նախագահ, նրա օգնականին- գանձապահ և քարտուղար:

§ 19.

Վերջին երկու պաշտօնը, ընդհանուր ժողովի որոշմամբ, կարող է վարել և մի անձնաւորութիւն:

Վարչութեան խորհուրդները պէտք է տեղի ունենան ըստ կարելոյն յաճախ, նախագահի հրաւէրով, կամ վարչութեան անդամների ոչ պակաս, քան մի եր-

րորդականի պահանջմամբ. նիստերի օրը և ժամանակը ծանուցվում է ի գիտութիւն ընդհանրութեան։

§ 20.

Վարչութեան նիստը կայացածէ համարվում, եթէ բացի նախագահից, ներկայ է անդամների կեսից ոչ պակաս։

§ 21.

Վարչութեան վճիռները կայանում են ներկայ անդամների ձայների առաւելութեամբ, որի մասին կազմվումէ արձանագրութիւն ամենքի ստորագրութեամբ։

Ձայների հաւասարութեան դէպքում։ նախագահի ձայնն ունի գերակշռութիւն։

§ 22.

Վարչութեան պարտականութիւններն են

ա] ընկերութեան անդամների հետ կայացրած փոխադարձ համաձայնութեամբ յանձնարարել նրանց զանազան պարապմունքներ ընկերութեան վերոգրեալ բոլոր հարցերի և խնդիրների վերաբերմամբ,

բ) տեղեկութիւններ ժողովել օգնութեան և խնամարկութեան դիմողների վերաբերմամբ.

գ) անհրաժեշտ նպաստների բաշխումն ներկայացած կարիքների և ընկերութեան միջոցների համեմատ.

դ) Կարելւոյն չափ յաճախ ստուգել ընկերութեան գումարներն ու գոյքը, ընդհանուր հիմունքների համեմատ։

ե) Հրաւիրել ընկերութեան ընդհանուր ժողովներ։

զ] Յարաբերութիւն ունենալ պատշաճաւոր տեղերի և անձինքների հետ ընկերութեան անունից։

է) Հոգ տանել ընկերութեան միջոցները աւելացնել նրա նպատակին հասնելու համար։

ը) Հսկել սոյն կանոնների հրագործման վրայ.

թ) Ներկայացնել ընդհանուր ժողովին իրաքանչիւր տարուայ սկզբում տարեկան նախահաշիւ և տարեկան հաշիւ ընկերութեան գումարների և գործունէութեան վերաբերմամբ նախընթաց տարուայ համար։

ժ] Նշանակել և արձակել պաշտօնական անձանց ընկերութեան յիմնարկութիւններում և հսկել նրանց պարտականութեանց կանոնաւոր կատարման վրայ.

ի] Իրագործել ընդհանուր ժողովի վճիռները.

լ) Ցնոութեան առնել ընկերութեան իսկական անդամների յայտարարութիւնները.

ի) Ներկայացնել ի խորհրդածութիւն ընդհանուր ժողովի և կանխօրէն մշակել այնպէսի հարցեր, որ չեն վճռուած վարչութեան մէջ, կամ առաջին իր իրաւասութեան սահմանից.

ծ] Կազմել ընկերութեան անդամների ցուցակը։

§ 23.

Նախագահի բացակայութեան կամ հիւանդութեան դէպքում, նրա իրաւունքները և պարտականութիւններն անցնում են նրա օգնականին, իսկ վերջինիս բացակայութեան դէպքում վարչութեան անդամներից մէկին, փոխադարձ համաձայնութեամբ։

§ 24.

Վարչութեան գանձապահը վարում է ելից և մտից մատեանները—դրամական և նիւթական, ընդունում է շարունակ դրամական վճարներ և նուիրատուութիւններ, վարում է իր հաշիւներ և կազմում է տարեկան հաշիւը։

Ծանօթութիւն. գանձապահի մօտ գտնուող դրամների, փաստաթղթերի, ելից և մտից այլ մատեանների պահպանութեան եղանակը և կարգը նոյնպէս և դրանց ընդունելն յանձնելը կատարվում է առանձին հրահանգութեամբ, որ կազմու-

մէ վարչութիւնը և հաստատում ընդ. ժողովը։

§ 25.

Քարտուղարը տանում է վարչութեան գործավարութիւնը, կազմում է վարչութեան նիստերի և ընդ. ժողովի արձանագրութիւնները կազմում է ընկերութեան անդամների այբուբենական ցանկը և օգնութեան դիմողների ցուցակը (ցոյց տալով կարօտութիւն ունեցողների բնակութեան տեղը, նրանց մասին ժողոված դեղեկութիւնները և ստացած նպաստների քանակութիւնը) նոյնպէս կազմում է հաշիւներ ընկերութեան գործունէութեան վերաբերմամբ։

Բոլոր գուրս եկող թղթերը ստորագրում է նախագահը և վաւերացնում քարտուղարը։

§ 26.

Դրամով և իրեղէններով նուիրաբերութիւններ ժողովելու համար տրվում են այս նպատակի համար ընտրուած անձանց նախագահի ստորագրութեամբ և քարտուղարի վաւերացմամբ տպագրուած մատեաններ, որ ներկայացնում են ընկերութիան գումարների և գոյքի ամսական սդուդութեան ժամանակ։

§ 27.

Իրեղէններով ժողոված նուիրաբերութիւ-

նները տրվում են նախագահին գործադրելու ըստ իւր հաեցողութեան. իսկ գրական նուիրաբերութիւնները յանձնվում են գանձապահին ընկերութեան գումարներին աւելացնելու համար։

§ 28.

Ընկերութեան անդամները կարող են նիրկայ գտնուիլ (առանց վճռող ձայնի իրաւունքի) վարչութեան խորհրդի նիստերին և յայտնել իրանց կարծիքը ընկերութեան գործունէութիւնը բարուոքելու նկատմամբ։

Վարչութիւնը խորհրդածութեան առնելով այդ ենթադրութիւնները և հիմնաւոր գտնելով կատարում է տալիս նրանց, իսկ եթէ իւր իրաւունքներից բարձր է լինում, ներկայացնում է ընկերութեան ընդ. ժողովի հայեցողութեանը։ Եթէ վարչութիւնը չի ընդունում յայտնած կարծիքը, իրաւունք է տրվում կարծիքը յայտնող անդամին ներկայացնել զայն իխորհրդածութիւն ժողովի։

V Ընկերութեան ընդ. ժողովները։

§ 29.

Ընկերութեան ընդ. ժողովները լինում են հերթական և արտակարգ. հերթական ժողովները լինում են տարուայ վերջը և Զատկից յետոյ։ իսկ արտակարգները հարկաւոր դէպքում վարչութեան

որոշմամբ, կամ պահանջմամբ ընկերութեան անդամների, թուով 25-ից ոչ պակաս։

Ծանօթութիւն. ընդհանուր ժողովները հրաւիրվում են առանձին ծանուցագրերով, որ ուղարկվում են անդամներին ժողովի համար որոշած ժամանակից գոնէ երեք օր առաջ։

Այդ ծանուցագրերի մէջ նշանակում են այն հարցերը, որ պէտք է առաջարկուին խորհրդածութիւն ընդ. ժողովի և այնուհետև վարչութիւնն իրաւունք չունի ժողովում ուրիշ հարցեր առաջարկելու, բացի ծանուցագրերում նշանակածից։

§ 30.

Ընկերութեան ընդհանուր ժողովների պարապմունքի առարկաները հետևեալներն են.

1) ընտրութիւն նախագահի ընդ. ժողովի համար, ընկերութեան պատուաւոր անդամների, վարչութեան և վերստուգող յանձնա ժողովի անդամների և դրանց անձնափոխանորդների.

2) վարչութեան կիսամեայ և տարեկան հաշիւների և հետևեալ տարուայ նախահաշուի զննութիւնն ու հաստատութիւնը։

3) Որոշել այն նպաստների չափը, որ

հարկաւոր դէպքում տրվում են վարչութեան նախագահի կարգադրութեամբ։
4) քննել այն հարցերի, որոնք վերաբերում են ընկերութեան պահեստի դրամագլուխ, կամ յատուկ գումարներ կազմելուն։
5) Որոշել դիւանական ծախքերի չափը։
6) Վճռել այն հարցերը, որոնք վերաբերում են կանոնադրութեան փոփոխման կամ լրացման։
7) Վճռել ընկերութիւնը փակելու հարցը։
8) Քննութեան առնել ընկերութեան և նրա անդամների գործունէութեան մասին եղած դանդատները։
9) Քննել առհասարակ այն բոլոր հարցերը, որ առաջարկվում են վարչութեան, վերստուգող յանձնաժողովի և ընկերութեան իւրաքանչիւր անդամի կողմից։

§ 31.

Ընկերութեան ընդհանուր ժողովը օրինաւոր լինելու համար անհրաժեշտ է ընկերութեան անդամների կէս մասի ներկայութիւնը։

Ծանօթութիւն. եթէ որ և է հարցի վերաբերմամբ հրաւիրուած ընդհանուր ժողովի նիստը չի կայանում անդամների օրինաւոր թուի. ներկայ չգտնուելու պատճառով, հրաւիրվում է երկրորդ

ժողով, որ յամենայն դէպս կայացած է համարվում։

§ 32.

Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովի վճիռները որոշվում են ձայների բացարձակ առաւելութեամբ, բացառութեամբ այն հարցերի, երբ պէտք է կանոնադրութիւնը փոփոխել կամ լրացնել, երբ հարկաւոր դէպքում պէտք է ընկերութեան անդամներից որ և է մէկին հիւացնել, երբ պէտք է նորից հեռացրած անդամին ընդունել և երբ պէտք է ընկերութիւնը փակել. այս դէպքերում պահանջվում է ժողովին ներկայ գտնուող անդամների թուի $2|_3$-ի համաձայնութիւնը։

Ընդհանուր ժողովի վճիռների վերաբերմամբ կազմվում է օրագիր ներկայ գտնուողների ընդհանուր սդորագրութեամբ։

§ 33.

Բոլոր ընտրութիւնները կատարվում են ընդհանուր ժողովում գաղտնի քուէարկութեամբ։

VI Ընդհանուր կանոններ.

§ 34.

Ընկերութիւնը գտնվում է ներքին գործոց նախարարութեան վարչութեան ներքոյ։

§ 35.

Ընկերութիւնն ունիլով իւր անուանական կնիքը. առանց որ և է դրոշմանշանի, կամ խորհրդանշանի:

Ծանօթութիւն. ընկերութեան կնիքը պահվում է վարչութեան նախագահի, կամ նրաօգնականի մօտ:

§ 36.

Ընկերութեան անդամները կարող սահանալ վարչութիւնից իրանց այդ ընկերութեան անդամ լինելը հաստատող տոմսեր կամ վկայագրեր:

§ 37.

Ներկայ կանոնադրութիւնը փոփոխման կամ լրացման ենթարկելու համար, իւրաքանչիր անդամ պէտք է ունենալ պատշաճաւոր թոյլտուութիւն:

§ 38.

Ընկերութեան գումարների և գործունէութեան մասին կազմած տարեկան մանրամասն հաշիւները, ընդհանուր ժողովում հաստատուելուց յետոյ, իւրաքանչիւր տարի երկու օրինակ ներկայացնում են մէկը երկրիս կառավարչին, միւս նրա միջոցաւներքին գործոց նախարարութեան:

Նոյն նախարարութեան և նոյն կարգով ներկայացնում են ընկերութեան

կանոնադրութեան հինգ տպագրած օրինակներ:

Բացի սորանից, երկրիս կառավարչի միջոցաւ նախարարութեանը ներկայացնում է, որոշուած ձեով կազմած տարեկան հաշիւների համառօտ ցուցակը:

Երկու տարուայ ընթացքում հաշիւների և համառօտ ցուցակի չուղարկելը կարողէ ընդունուել իբրև հիմք ընկերութիւնը փակելու:

VII Ընկերութեան փակումը:

§ 39.

Եթէ որև է պատճառով կամ հանգամանքներով ընկերութիւնը դադարեցնէ իւր գործունէութիւնը յայնդէպս նրա ամբողջ դրամագլուխը և բոլոր գոյքը գործադրվում են զանազան բարիգործութիւնների վրայ, ընկերութեան անդամների ընդհանուր ժողովի որոշմամբ:

§ 40.

Ընկերութեան փակման մասին յայտնվումէ ներքին գործոց նախարարութեան, երկրիս կառավարչի միջոցաւ: